# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N: 1
## N: ՀՀԳՆՋՏՊԿ-ՇՀԾՁԲ-11/9-ՍՀՋ-11-01
## ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «18» 12 2015 թ.

«Սևան-Հրազդանյան-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ս. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սինխրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս Ընկերության տնօրեն Դ. Ստեփանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 20 հոդված 4 կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Պատվիրատուն հանձնարարում է, և Կատարողը լրացուցիչ իրականացնում է սարքերի և սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայություններ 2015 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում:

2. Սույն պայմանագրի 4.1 կետն ընդունել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 15600000 (տասնհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Սևան-Հրազդանյան-Ջրառ» ՓԲԸ | «Սինխրոն» ՍՊԸ |
| ՀՀ ք. Երևան, Ա. Արմենակյան 125 | ՀՀ ք. Երևան, Աջափնյակ 73 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Արցախ» մ/ճ | «Պրոմեթեյբանկ» ՍՊԸ |
| h/h 11500846892400, ՀՎՀՀ 00093621 | h/h 1660000772700100, ՀՎՀՀ 01825192 |
| Տնօրենի պաշտոնակատար | Տնօրեն |
| ________ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | ________ Դ. ՍՏԵՓԱՆՅԱՆ |
| Կ. Տ. | Կ. Տ. |